

Կ-904<sup>1</sup>-02.12.2015-ԳԿ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-297 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 27-րդ կետով.

« 27) Նպատակային ուսուցում՝ մասնագիտական կրթական ծրագրերով պետության համար առաջնային եւ կարելություն ներկայացնող բնագավառները, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության տարածաշրջանները, այդ թվում սահմանամերձ եւ բարձրլեռնային բնակավայրերը, համապատասխան որակավորմամբ մասնագետներով ապահովելու նպատակով իրականացվող ուսուցում:»:

**Հոդված 2.** Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Նպատակային ուսուցմամբ ուսանող ՀՀ քաղաքացիների համար պետությունը երաշխավորում է պետական ուսումնական հաստատություններում մրցութային կարգով՝ անվճար նախնական (արհեստագործական), միջին, բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու իրավունք: Այս դեպքում մրցութային ընդունելությունն իրականացվում է ընդհանուր մրցույթից առանձնացված՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողի հետ կնքված պայմանագրում պարտադիր ամրագրվում է նաեւ հետևյալ պայմանը. Ուսանողը ավարտելուց հետո առնվազն 3 տարի ժամկետով, ՀՀ կառավարության սահմանած կարգով, գործուղվում է աշխատելու ուղեգրող կազմակերպության նախատեսած վայրերում: Այս պայմանը չկատարելու դեպքում շրջանավարտը ՀՀ կառավարության սահմանած կարգով եւ ժամկետներում պարտավոր է փոխհատուցել ուսումնառության տարիների համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրված ուսանողական նպաստի ձեռով ուսման վճարի լրիվ փոխհատուցման չափի եւ պետական կրթաթոշակի չափի հանրագումարի կրկնապատիկը:

Փոխհատուցված գումարի 70 տոկոսը *բարձրագույն ուսումնական հաստատությունը* վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, իսկ 30 տոկոսը տնօրինում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:»:

**Հոդված 3.** Օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին պարբերությունում «հաստատությունների,» բառից հետո լրացնել «նպատակային ուսուցմամբ ուսանողներին, այդ թվում՝ » բառերը:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ**

**«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկությունների**

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
<p>ՀՀ ԱԺ պատգամավոր Հակոբ Հակոբյան /024 ընտրատարածք/</p>	<p>Առաջարկում եմ նախագծերի 2-րդ հոդվածները լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Պետական բյուջեից տրամադրված ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցման չափի և պետական կրթաթոշակի չափի հանրագումարի կրկնապատիկը տրամադրվում է այն համապատասխան մասնագետին, որը նպատակային ուսուցմամբ ուսանողի փոխարեն առնվազն 3 տարի ժամկետով ՀՀ կառավարության սահմանած կարգով համաձայնություն կտա գործուղվելու աշխատելու ուղեգրող կազմակերպության նախատեսած վայրում:</p>	<p>Չի ընդունվել.</p>	<p>Պայմանագրային պարտավորությունները չկատարած ուսնողի ուսումնառության տարիների համար ՀՀ պետական բյուջեից տրամադրված ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցման չափի և պետական կրթաթոշակի չափի հանրագումարի կրկնապատիկը այլ անձի տրամադրելը նպատակահարմար չէ: Օրենսդրական նախաձեռնությամբ ակնկալվում է, որ կկարգավորվեն պետական պատվերի շրջանակում և բարձրագույն և հետբուհական նպատակային կրթության հետ կապված հարաբերությունները, իսկ փոխհատուցման ենթակա գումարի ամրագրումը կբարձրացնի նպատակային տեղում սովորողի պատասխանատվությունը:</p>

			<p>ներ՝ կատարելու իր պարտավորությունը պետության և համայնքի նկատմամբ, այն է. պետության աջակցությամբ կրթություն ստանալու և ստացած մասնագիտությանը համապատասխան 3 տարի աշխատելու պարտավորությունը: Այլապես, պետության միջոցներով կրթություն ստանալը և պայմանագրային պարտավորություն չկատարելու համար պետության կողմից ուսումնառության համար ծախսված գումարին համարժեք փոխհատուցում վճարելը կարող է վերածվել «սպառողական վարկի» ձեռքբերման:</p>
<p>ՀՀ կառավարություն</p>	<p>Առաջարկում ենք նախագծերի 2-րդ հոդվածների 2-րդ պարբերություններում «բուհ» բառը փոխարինել «բարձրագույն ուսումնական հաստատությունը» բառերով՝ նկատի ունենալով, օրենքներում այս բառերի կրառությունը:</p>	<p>Ընդունվել է.</p>	<p>Նախագծերում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>